գըստեան տալով տեառն—գրեալ ի նա զպատճառս լուսաւորութեանն զոր սիրէաք, որում և ցանգորդն եաք տեսութեան։

Եւ կարգացեալ զպատճէնն 1) վերաստ եղեաք 2) շարամանութեանն, զոր սիրէաք, որ ունէր զայս ձև օրինակի, թէ ... (Քանի որ Անանիա կաթուղիկոսի կոնդակի շարունակութիւնը քաղուածք է 949 թըուականին գոյութիւն ունեցող Աղուանից պատմութեան գրքից, իսկ Օրբելեանն էլ քաղուածք է արել սոյն կոնդակի գրութիւնից, ուստի հարկաւոր համարեցի սիւնակների մէջ դէմ առ դէմ շարել նախ Աղուանից պատմութեան այն կտորները որ մնած է Անանիայի կոնդակի մէջ. երկրորդ բուն կոնդակի քաղուածքը Աղուանից պատմութիւնից. և երրորդ Օրբելեանի քաղուածքը յիշեալ կոնդակի պատմութիւնից, Նախ քան սիւնակների միջոցով համեմատական գաղափար տալը, տեսնենք մինչև ցարդ յառաջ բերած կոնդակի մասից ինչպէս է օգտուել Օրբելեանը. ահա Օրբելեանի պատմածը Անանիայի Աղուանից աշխարհը գնալու և այն տեղի անցքերի մասին)։

—«Եւ դէմ եղեալ երթայր յԱղուանս 1) և հասեալ ի գաւառն Խաչենոյ՝ ընդ առաջ ելանէ նմա իշխանն Գրիգոր և տարեալ իջուցանէ ի տան իւրում։ Եւ ժողովէ զամենայն իշխանս աշխարհիս և զեպիսկոպոսունս և զվանականս ի տեղին, որ Ագախն 2) կոչի. վան և Գագիկ և Ցովնան։ Ապա խնդրէր 3) կաթուղիկոսն Անանիա զպատմութիւնն Աղուանից, զի գիտասցեն զորպիսութիւնն Աղուանից Աթոռակալացն, և նոքա թագուցեալ ամենեքին ոչ ցուցանէին։ Ապա ըստ վերին խնամոցն ի գիշերի պաշտամանն գնէ եկեղեցապանն Գանձատան գիրք մի՝ որպէս թէ Ցովհաննու Ոսկեբերանի է, 4) և մեծարեն զկաթուղիկոսն յընթեռնուլ, զոր և բացեալ եգիտ զոր խնդրէրն, զի էր պատմութիւնն Աղուանից»։

1) ա. զպատճէննն: 9) բ. եղաք: 2) Օրբելեան. Փարիզ Բ. հատոր երես 21. Մոսկվա երես 205.

1) Փարիզեան տպ. Արղախն: 2) Փար. խնդրէր ապա:; 3) Մոսկ. չիք:)

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ Մ. ԿԱՂ. ԳԻՐՔ ԹՂԹՈՑ ԱՆԱՆԻԱՅԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ.

Ա.

— «Յետ առաքելոցն 1) Բարդուղիմէոսի և Թադէոսի զկնի ՄԿԶ (266) ամի. Ն. և ի Ժ. (17) ամին Տրդատայ Հայոց թագաւորի։ և Ուռնայրի 2) Աղուանից թագաւորի ընծայի յաթոռ նոցին Առաքելոցն՝ Սուրեան Պահլաւ 3 Արշակունին, յազգէ Տէր սուրբ Գրիգորի 4) Լուսաւորչին Հայոց, ի կռապաշտութեանն դեռ գոլով Տրդատայ և Ուռնայրի Հայոց և Աղուանից թագաւորացն։

Այն հատուածի մասին ոչ Աղուանից և ոչ էլ Սիւնեաց պատմիչները ոչինչ չեն յիշատակում։ Աղուանից պատմութեան այն կտորները, որոնցից քաղուածքներ է արել Անանիա կաթուղիկոսը, համեմատութեան համար դէմ առ դէմ եմ դնում Աղուանից պատմութեան երկու խմբերի թէ տպագիր և թէ գրչագիր օրինակներից քաղուածքներ—իւրեանց տարբեր ընթերցուածներով հանդերձ միայն բնագիր ընդունելով ամէնից հին ՉԼԸ (738=1289) թըուականի երկաթագիր օրինակը. իսկ մնացեալները տարբերութեանց համար թողնելով։ Օրինակների համառօտագրութիւններն են՝ Պունկիանոս դպրի օրինակը=Պ. Շահխաթունեանի օրինակը=Շ. Փարիզեան տպագրութեան համար=Փ. Մոսկվայի=Մ. Երկրորդ խմբի բոլորագիր օր.=Բ. Նոտրագիր օր.=Ն.

1. տբ. (ա=համար 100 ձեռ. բ=համար 58 ձեռ.)—առաքելոյն: 2. Ուռնայր ի Աղուանից: 3. տբ. Պահլաւ: 4. ա. Գրիգոր:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ.

Բ.— «Յայնժամ –) ազգեալ չարին ի միտս չար արքանեկացն, տարեալ ընկենուին զուրբն Գրիգորիոս յանհնարին խոր վիրապին Արտաշատ քաղաքի. յորում զերեքտասան ամ[1] ածախառն[2] բնակէր վայրի. . . . . ևլն ևլն.

«Նորին իսկ Դեւքն զորս նուիրաւքն[3] և զոհիւք[4] մեծարէին. Իբրև[5] ի վերայ թշնամեաց հասեալ տային[6] մոլեգնեալ,[7] և ուտել զիւրեանց մարմինսն,[8] այլ և բնորին թագաւորին զկերպարանս ի խոզի դարձուցեալ զբնութիւն[9] յեղեգն[10] լինել փախստեայ.

«Յայնժամ ահ և երկիւղ սաստիկ զամենեսեան լնոյր, մինչև մնացին կորստեան կենաց աշխարհին.

«Մինչդեռ[11] յայսմ ահի և ի դողման կային ի մեծամեծաց մինչև ի փոքունս,[12] երևէր ի տեսլեան գիշերոյ, հրեշտակ ողորմութեան Աստուծոյ, կնոջ ումեմն Խոսրովիդուխտ անուն[13] քեռ Տրդատայ Հայոց արքայի».

«Անհնարին է ձեզ, ասէ, ի հարուածոյդ[1] զերծանել, բայց եթէ[2] ի ձեռն սրբոյն Գրիգորի, երթեալ հանէք զնա ի խոր վիրապէն. .ս. . . ևլն.

«Որոց ծունր եդեալ մեծին սրբոյն[3] Գրիգորի, արտասուաւք խնդրէր յամենողորմն[4] Աստուծոյ զփրկութիւն թշուառացեալ ազգին.

«Եւ անդէն վաղվաղակի ընդունէին ի ձեռն սրբոյն աղաչանաց զբժշկութիւն մարմնական տանջանացն, ընդնմին և զհոգւոյն[5] լուսաւորութիւն. . .ևն.

«Եւ ոչ կացեալ իւր իսկ ունել զաթոռ քահանայապետութեան, հրեշտակ[6] Աստուծոյ եկեալ առ մեծն Գրիգորիոս[7] ասէ ցնա. Ո՛չ հեստել[8] և համառեալ[9] առ խոնարհութեան կարգին, այլ յայսըմ քաջանալ և առնուլ կրկին զանանցական պատիւն որ վասն քահանայապետութեան շնորհի[10] Աստուծոյ.[11] . . . .ևլն.

Այս հատուածը Աղուանից պատմիչը քաղուածք է արել Ագաթանգեղոսից, որի համար երկրորդ խումբը զանցառութեան է տուել։ Որ է

ԳԻՐՔ ԹՂԹՈՑ.

Ա.—«Սէր այսահալած[1] արտասուօք ի խորս թիւնաւորացն յամենելով եռահնգեայ[2] ամօք սատանոր արտաքսեալց զԱշքանազեանս[3] ազնի կռապաշտութեանց դիւցախաւար ձենձերոց, անմահացեալ ի տանջանս և մահացուցեալ զխչխան աշխարհիս՝ զսատանայ և զկամարարս նորին, զարի և զմեծ հսկայն զդիւցազոհն Տրդատ Հայոց թագաւոր, անմաքրից գաղափարեալ կնճթակերպ խոզիցն վարսիւք։

«Որով և կրկին ընկալեալ եղև շնորհ ի շնորհաբաշխն Քրիստոսէ ի ձեռն երազոցն Խոսրովիդխտոյ, ոչ այլ ազգ գտանել բուժել յախտիցն դիւաբախութեանց, թէ ոչ աղաւաղելոցն ի խորս թինաւորցն սրբոյն Գրիգորի ձեռամբ։

«Յաղագս որոյ[4] և զանյիշատակն ի թագաւորին խնամոցն պահեալ, փրկութիւն աղօթիւք նորին գործեաց[5] թագաւորին։։

«Որոյ եղեալ[1] աղօթէր վասն նորին և բժշկեալ մկրտէր յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։[2]

Զոր և անդանօր նորին երանելւոյն Տրդատայ թագաւորին գերապատուեալ զնա խորաշքեղ զաւ՛դիւք հանդունակ Ահարոնի քահանայապետի, վակասակիր երկակի վեց ակամբ[3] շարառութեամբ, բերեալ զօրինակ ապագայից զքահանայապետին Գրիգորիսի, շնորհեալ պատիւ իւրոյ Լուսաւորչին։

« Որ ինչ սակս երիցս երանելւոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի պատմութիւն, Ագաթանգեղոս ուսուցէ։ Իսկ զոր առ Եղուանս գործ ընդձեռն մանկանն Գրիգորի, գտանի յայսըմ մատենի։

«Վասն զի մեծին Գրգորի կամ էր[1] ոչ նստել յառաքելական յայն աթոռ,[2] հրեշտակ Աստուծոյ եկեալ առ նա, ասէ, ո՛չ հեստել և արհամարհելով է յամառել ի խոնարհութեան կարգի, այլ քաջանալ և առնուլ զկրկնակի անանցականութեան պատիւն զոր վասն քահանայութեանն շնորհի յԱստուծոյ»։

Կը շարունակուի.

Խ. Վ.

--- Պատմ. աղ. խումբ. ա. գիրք. ա. գլուխ ԺԴ (14)։

1. Ղմ. ամս.։ 2. Ղ. օծախառն։ Փմ. յօծախառն։ 3. Մ. նուիրօք։ Նփ. նուիրօքն։ 4. Ղ. զոհիւքն։ 5. Մ. պակասի իբրեւ։ 6. Մ. յաւելու. տայլին նոցա։ 7. Փմ. մոլոգնել։ 8. Մ. մարմինս։ 9. Փ. բնութիւն։ Մ. ի բնութիւն։ 10. Փմ. յեղէգն։ 11. Մ. մինչեւ։ 12. Ղմ. ցփոքունս։ 13. Ղ. յանուն։

1. Մ, հարուածոյդ։ 2. Ղշփմ. եթէ։ 3. Մ. պակասի. սրբոյն։ 4. Ղմ. յամենողորմէն։ 5. Փ. զհոգւոյն։ 6. Ղշմփ. հրեշտակ։ 7. Փ. Գորիգոր։ 8. Փ. հեստել։ 9. Ղմփ. յամառել։ 10. Փ. շնորհին։ 11 Ղմ. յԱստուծոյ։

1. Ն. կամիր։ 2. Ն. յԱթոռ։

1. աբ. այսհալած։ 2. ա. եռամնչեաց։ 3. ա. զայսքնազեանս։ բ. զայսք աշեանս։ 4. ա. որու 5. բ. գործէ։

1. Բն. եկեալ։ 2. ա. պակասի. սրբոյ։ 3. աբ. Զ ակամբ։